ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2025 թվականի № --Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի №320Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, և հաշվի առնելով «ՄՈՒՍԱՀԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի սեպտեմբերի 25-ի, հոկտեմբերի 3-ի և դեկտեմբերի 25-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 28-ի «ՄՈՒՍԱՀԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ախուրյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №320Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2025 թվականի հունիսի 29-ը» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի հունվարի 9-ը» բառերով, իսկ «մինչև 2040 թվականի հունիսի 29-ը» բառերը՝ «մինչև 2040 թվականի հունվարի 9-ը» բառերով,
   2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 2460 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով).

1) հիդրոտուրբին №1՝ F-1370/35, 1370 կՎտ, 2023թ.,
2) գեներատոր №1՝ СГ2-1200-12-4УХЛ, 1200 կՎտ, 1983թ.,
3) հիդրոտուրբին №2՝ F670/35, 670 կՎտ, 2023թ.,
4) գեներատոր №2 СГ2-630-12-4УХЛ, 630 կՎտ, 1984թ.,
5) հիդրոտուրբին №3՝ F670/35, 670 կՎտ, 2023թ.,
6) գեներատոր №3՝ СГ2-630-12-4УХЛ, 630 կՎտ, 1984թ.:»:

2. «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2019 թվականի հուլիսի 26-ի №G 4069 գրությամբ տրամադրված, 2022 թվականի սեպտեմբերի 9-ի №G 4389 գրությամբ երկարաձգված թիվ EA19/00145 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 9-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- հունվարի 2025թ.